

II

(Ոչ օրենսդրական ակտեր)

ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ

Էլեկտրական շարժիչների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների մասին Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2005/32/ԵՀ հրահանգը կիրարկող թիվ 640/2009 կանոնակարգը (ԵՀ) փոփոխող՝ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 թվականի հունվարի 6-ի թիվ 4/2014 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը, հաշվի առնելով «Էներգասպառող արտադրատեսակների¹ էկոնախագծմանը ներկայացվող պահանջներ մշակելու համար շրջանակ սահմանելու մասին» Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2009 թվականի հոկտեմբերի 21-ի 2009/125/ԵՀ հրահանգը և մասնավորապես՝ դրա 15(1) հոդվածը,

Էկոնախագծման հարցերով խորհրդատվական ֆորումում քննարկումներից հետո, քանի որ՝

- 1) Հանձնաժողովի թիվ 640/2009² կանոնակարգի (ԵՀ) կիրարկմամբ ձեռք բերված փորձի արդյունքում ի հայտ է եկել թիվ 640/2009 կանոնակարգի (ԵՀ) որոշ դրույթներում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն՝ այդ կանոնակարգով կարգավորվող՝ շարժիչների շուկայի և

¹ ՊՏ L 285, 31.10.2009թ, էջ 10:

² ՊՏ L 191, 23.07.2009թ, էջ 26:

արտադրատեսակների արտադրողականության վրա չնախատեսված ազդեցություններից խուսափելու համար.

- 2) էլեկտրական շարժիչների շուկայում վերջին զարգացումները հանգեցրել են բարձրության, մթնոլորտային օդի առավելագույն եւ նվազագույն ջերմաստիճանների եւ ջրային հովացուցիչի ջերմաստիճանների նկատմամբ կիրառվող սահմանային արժեքների փոփոխությունների, որոնք թույլ են տալիս դիտարկել, որ շարժիչը պետք է աշխատի ծայրահեղ պայմաններում, եւ հետեւաբար անհրաժեշտ է մշակել հատուկ կառուցվածք: Այդ զարգացումները պետք է արտացոլվեն կանոնակարգում.
- 3) սույն կանոնակարգով նախատեսված միջոցները համապատասխանում են 2009/125/ԵՀ հրահանգի 19(1) հոդվածով ստեղծված Կոմիտեի եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Թիվ 640/2009 կանոնակարգում (ԵՀ) կատարվող փոփոխությունները

Թիվ 640/2009 կանոնակարգում (ԵՀ) կատարել հետեւյալ փոփոխությունները.

- 1) 1-ին հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«Հոդված 1

Կարգավորման առարկան եւ գործողության ոլորտը

1. Սույն կանոնակարգով սահմանվում են էկոնախագծմանը ներկայացվող պահանջներ՝ շարժիչների, այդ թվում՝ այլ արտադրատեսակներում ինտեգրված շարժիչների շուկայահանման եւ շահագործման համար:
2. Սույն կանոնակարգը չի կիրառվում՝

- ա) ամբողջովին հեղուկի մեջ ընկղմված վիճակում աշխատելու համար նախատեսված շարժիչների նկատմամբ,
- բ) արտադրանքի մեջ ամբողջությամբ ինտեգրված շարժիչների նկատմամբ (օրինակ՝ ռեդուկտոր, պոմպ, օդափոխիչ կամ կոմպրեսոր), որոնց էներգաարդյունավետությունը չի կարող ստուգվել տվյալ արտադրանքից անջատ,
- գ) այն շարժիչների նկատմամբ, որոնք նախատեսված են շահագործվել բացառապես՝
- i) ծովի մակարդակից ավելի, քան 4000 մետր բարձրության վրա,
 - ii) մթնոլորտային օդի 60°C ջերմաստիճանը գերազանցող պայմաններում,
 - iii) առավելագույնը 400°C-ից բարձր ջերմաստիճանային պայմաններում,
 - iv) ցանկացած շարժիչի դեպքում, երբ մթնոլորտային օդի ջերմաստիճանը ցածր է 30°C-ից, կամ ջրի սառեցման համակարգով շարժիչների դեպքում, երբ ջերմաստիճանը ցածր է 0°C -ից,
 - v) եթե սարքավորում մտնող ջրային հովացուցիչի ջերմաստիճանը ցածր է 0°C-ից կամ գերազանցում է 32°C-ը, կամ
 - vi) պոտենցիալ պայթյունավտանգ միջավայրում, ինչպես սահմանված է Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 94/9/ԵՀ հրահանգով*,
- դ) արգելակման շարժիչների նկատմամբ,
- բացառությամբ, երբ խոսքը վերաբերում է I հավելվածի 2(3)–(6) եւ (12) կետերով սահմանված տեղեկությունների պահանջներին:

* ՊՏ L 100, 19.04.1994թ, էջ 1:»:

- 2) Թիվ 640/2009 կանոնակարգի (ԵՀ) I հավելվածը փոփոխվել է սույն կանոնակարգի հավելվածին համապատասխան:

Հոդված 2

Ուժի մեջ մտնելը

Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում *Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո 20-րդ օրը:*

Այն կիրառվում է ուժի մեջ մտնելուց վեց ամիս հետո:

Սույն կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Բրյուսելում 2014 թվականի հունվարի 6-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Նախագահ

Ժոզե Մանուել Բաղոզու

*ՀԱՎԵԼՎԱԾ***Թիվ 640/2009 կանոնակարգի (ԵՀ) I հավելվածում կատարվող
փոփոխությունները**

I հավելվածի 2-րդ կետում հետևյալ ենթապարբերությունն ավելացնել երրորդ ենթապարբերությունից հետո.

«Եթե տեխնիկական տվյալներ պարունակող ցուցնակի չափսը թույլ չի տալիս նշել 1-ին կետում նշված բոլոր տեղեկությունները, ապա պետք է նշվի միայն լրիվ ծանրաբեռնվածության եւ առավելագույն լարման (U_N) պայմաններում անվանական ՕԳԳ-ն»:
